



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2019 թ.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՅԻՆ
/2021, ՀՀ, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի պող. 59/

Ձեր 04.11.2019թ. թիվ Ե/2019-04.11/757 գր.

Հարգելի պարոն Սաքունց

Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով և 122-րդ հոդվածով աշխատանքային պայմանագիր է լուծվել «Ստեփանավանի թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ն.Մկրտչյանի հետ: Վերջինս մարզպետի կողմից կայացված որոշումը բողոքարկել է դատական կարգով, գործը գտնվում է դատաքնության փուլում: Դատաքնության արդյունքներին կարող եք հետևել datalex.am կայքով:

Օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիմքով որևէ տնօրենի լիազորություններ չեն դադարեցվել:

Մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացված ուսումնասիրության հիման վրա ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար «ՀՀ Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Կիմիկ Պետրոսյանի նկատմամբ կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը:

ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատարի զեկուցագրի հիման վրա ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ա.Միկոյանի անվան N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Նունե Մոսիսյանի, «ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մ.Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Հրաչ Փիլոյանի, «ՀՀ Լոռու մարզի Գեղասարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Վազգեն Դուկասյանի և «ՀՀ Լոռու մարզի Օձունի Հ.Օձնեցու անվան N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Անահիտ Աղիկյանի նկատմամբ կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը:

ՀՀ Լոռու մարզի դատախազի 03.04.2019թ. թիվ 652-19 միջնորդագրի հիման վրա ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար «ՀՀ Լոռու մարզի Դեբեդի

միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Զավեն Խաչատրյանի նկատմամբ կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը:

Հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի 04.04.2019թ. թիվ 04/24.1/5341-19 գրությունը, ՀՀ կրթության տեսչական մարմնի 01.04.2019թ. թիվ 1 ստուգման ակտի 2.1 կետը և ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի պետի 08.03.2019թ. թիվ 60/2-1482 միջնորդագիրը, ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու և դպրոցում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու համար «ՀՀ Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Կիմիկ Պետրոսյանի նկատմամբ կիրառվել է «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հարգանքով՝

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ